


# ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

AMERIA
MANAGEMENT ADVISORY

Մարտ, 2020թ.

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

-ն շարունակում է ***ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԸ*** ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում:



Այս աշխատությունը նվիրված է տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկի՝ ***ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ և ՍՊԱՍՎՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ:***




Այս աշխատանքը ***ԵՐԿՐՈՐԴՆ Է ԱՄԵՐԻԱ ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՓՄՁ ՈԼՈՐՏԻ*** համապարփակ հետազոտությունների շարքում:



# ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- ✓ Առկա տվյալների բազաների և զեկույցների վերլուծություն (Արմստատ, ՊԵԿ և այլն)
- ✓ Հարցում ՓՄՁ-երի շրջանում

❖ Հարցման դաշտային աշխատանքներն իրականացվել են ***2019թ. ՄԱՐՏ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ:***



❖ Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի առավել խոշոր ***5 ՔԱՂԱՔՆԵՐԻ***՝ Երևանի, Վանաձորի, Գյումրիի, Արմավիրի և Վաղարշապատի ***729 ՓՄՁ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ:***

❖ Հաշվետվության մեջ ներկայացված տվյալները 95% վստահության միջակայքում ունեն ***3.6% ՍՏԱՆԴԱՐՏ ՇԵՂՈՒՄ***:



❖ Հետազոտությամբ ստացված ***ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿՇՌՎԵԼ ԵՆ:***

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| ՓՄՁ ոլորտի սահմանումները և դրանց կիրառումները | ՓՄՁ ոլորտի նկարագիրը Հայաստանում | Ոլորտի ներկա վիճակը և սպասումները | Ներդրումներ և նորարարություն | ՓՄՁ-ները և բանկային համակարգը | Մասնագիտական ծառայություններ | Ծանուցումներ և հավելվածներ |
|---|---|---|---|---|---|---|

- ❖ Սահմանման կիրառման տարբերությունները
- ❖ Բանկերում կիրառվող սահմանումները
- ❖ Տարածաշրջանի երկրներում կիրառվող սահմանումները

- ❖ Ձեռնարկատիրական մթնոլորտը
- ❖ Փոփոխությունները 2013-ի համեմատ
- ❖ Արտաքին առևտուր
- ❖ Սպասումները
- ❖ Այլ…

- ❖ Բանկ ընտրելու կարևոր գործոնները
- ❖ Բանկային ծառայությունների օգտագործումը
- ❖ Այլ…



- ❖ ՓՄՁ քանակական գնահատականը
- ❖ Ոլորտի համապարփակ նկարագիրը

- ❖ 2018թ. իրականացված ներդրումները
- ❖ 2018թ. ներդրումները նորարարություններում
- ❖ Նոր նախագծեր և ընդլայնողական ծրագրեր
- ❖ Նոր նախագծերի ֆինանսավորման աղբյուրները

- ❖ Մասնագիտական ծառայություններից օգտվողներ
- ❖ Իրավաբանական
- ❖ Կառավարման խորհրդատվական
- ❖ Հաշվապահություն, մարքեթինգ և այլ

# ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

### Գերփոքր



մինչև **10** աշխատող

մինչև **100 մլն** հասույթ և ակտիվներ

### Փոքր



մինչև **50** աշխատող

մինչև **500 մլն** հասույթ և ակտիվներ

### Միջին



մինչև **250** աշխատող

մինչև **1500 մլն** հասույթ և **1000 մլն** ակտիվներ

- ❖ ***ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՉՈՒՆԻ ԼԱՅՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ*** տարբեր մարմինների կողմից, այդ թվում ***ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ*** (ՊԵԿ, ԱՎԿ):
- ❖ ***ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԱՅՍ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ՝*** հիմնականում ընտրելով սեփական դասակարգումը, որը հիմնված է IFRS-ի (ՖՀՄՍ) ՓՄՁ լայն սահմանման վրա:

# ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ՓՄՁ ՔԱՆԱԿԸ




❖ ***ԱԿՏԻՎ ՓՄՁ*** սուբյեկտների կշիռը բոլոր հարկ վճարողների մեջ (ներառյալ ոչ առևտր. կազմակերպությունները և հարկ վճարող ֆիզ. անձինք) ***46-47%*** է:

❖ 2018-ի սկզբին ***~67,000 ԱԿՏԻՎ ՓՄՁ:***

❖ 2013-ի համեմատ ***ՓՄՁ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԱՃԵԼ Է ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՏ 4 ՀԱԶԱՐՈՎ:***

** NACE դասակարգում*

*Աղբյուրը: Արմստատ, ՊԵԿ, Ամերիա ՓԲԸ*

# ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## Ոլորտի կառուցվածքը

### ՓՄՁ ոլորտի կառուցվածքն




### ՓՄՁ-ների դերը առևտրային բնույթի անկախ տնտեսական միավորների մեջ




- Եթե Armstat-ի տեղեկատվությունն ամբողջականացնենք բոլոր ՓՄՁ միավորների քանակի գնահատականներով, ապա կստացվի
  - **62,990՝ գերփոքր** (93.8%),
  - **3,447՝ փոքր** (5.1%)
  - **693՝ միջին** (~1.0%)

*Աղբյուրը: Արմստատ*

# ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## Աշխատողների քանակը

**ՓՄՁ ոլորտի աշխատողների միջին քանակն ըստ մարզերի**




- Միջինում, ըստ ՓՄՁ չափերի՝ աշխատողների թվաքանակը հետևյալն է.
  - ***ԳԵՐՓՈՔՐ՝ 1.1 ԱՇԽԱՏՈՂ***
  - ***ՓՈՔՐ՝ 19 ԱՇԽԱՏՈՂ***
  - ***ՄԻՋԻՆ՝ 97 ԱՇԽԱՏՈՂ***
- ***ԵՐԵՎԱՆՈՒՄ*** ՓՄՁ-երի աշխատողների միջին թվաքանակը ***3.7 Է, ՄԱՐԶԵՐՈՒՄ՝ 1-2*** (բացի Կոտայքից)
- Չնայած ***ԱՌԵՎՏՈՒՐՆ*** ամենամեծ քանակն է ապահովում ՓՄՁ ոլորտում՝ այստեղ ***ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԱՄԵՆԱՓՈՔՐՆ Է*** (ի հաշիվ գերփոքրերի կշռի):

*Աղբյուրը: Արմստատ*

# ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## Շրջանառություն ըստ մարզերի



Շրջանառության ծավալը 1 միավորի և 1 աշխատողի հաշվով
(ըստ մարզերի մլն)




- 2017-ի ընթացքում շրջանառության ծավալը կազմել է ***3.5 ՏՐԼՆ ԴՐԱՄ*** (միջինում ***1 ՓՄՁ ՀԱՇՎՈՎ՝ 58.8 ՄԼՆ ԴՐԱՄ*** կամ ***1 ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԱՇՎՈՎ՝ 20.8 ՄԼՆ ԴՐԱՄ***)։
- Ընդհանուր շրջանառության զգալի մասը պատկանում է մայրաքաղաքին, ինչը միավորների քանակի հաշվին է։
- Դիտարկված ՓՄՁ-ների կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքը 2017-ին ***ԿԱԶՄԵԼ Է ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ 39.2%-Ը։***

# Աշխատանքի արտադրողականություն

Աշխատանքի արտադրողականությունը ՓՄՁ խմբերի և խոշորների համար՝ ըստ գործունեության խմբերի
(ՀԱԱ/աշխ. թվաքանակ, մլն դրամ)




J- Տեղեկատվություն և կապ
G- Առևտուր
B- Հանքարդյունաբերություն
D- Էլ. Գազ, մատակարարում

- Ստեղծված ՀԱԱ-ն մեկ աշխատողի հաշվով կազմել է ***8.2 ՄԼՆ ԴՐԱՄ,*** իսկ ***ԽՈՇՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆԸ՝ 10.7 ՄԼՆ ԴՐԱՄ:***
  - ***ԱՌԵՎՏՐՈՒՄ (G)*** առավել արտադրողական են ՓՄՁ-ները: Դրա միակ բացատրությունը՝ ***ՈՉ ՖՈՐՄԱԼ (ՍՏՎԵՐԱՅԻՆ)*** աշխատողների առկայությունն է՝ հատկապես գերփոքր խմբում:
  - Խոշորների արտադրողականությունը շատ ավելի բարձր է ***B.ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ և J.ՏՀՏ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ, ՈՐՏԵՂ ՔԻՉ ԹԵ ՇԱՏ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ՈՉ ՖՈՐՄԱԼ*** (չգրանցված) աշխատողների խնդիրը:

# ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ



# ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ

## Ձեռնարկատիրական մթնոլորտի փոփոխությունները

### 2019-ին ձեռնարկատիրական մթնոլորտի փոփոխությունը 2018-ի համեմատ

[-2;2] սանդղակով




*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

- ***ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ*** չափի ձեռնարկությունները ոչ զգալի, բայց ***ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՆ*** արձանագրել;
- ***ՆԵՐՄՈՒԾՈՒՄ*** իրականացնող ՓՄՁ-ները դժգոհում են, իսկ ***ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԸ*** բարելավում են արձանագրում:

# ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ

## Ձեռնարկատիրական մթնոլորտի փոփոխությունները

### Ձեռնարկատիրական մթնոլորտի փոփոխությունը ըստ գործունեության տեսակների




L- Անշարժ գույքի հետ կապված ծառայություններ
G- Առևտուր
S- Մասնագիտական այլ ծառայություններ

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

- ❖ ***ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏԻ ՓՄՁ-ՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԶԳԱԼԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ:***

- ❖ Ըստ գործունեության տեսակի՝ առավել ***ՄԵԾ ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ «L-ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** ոլորտի միավորները, ինչը թերևս բացատրվում է անշարժ գույքի գների նկատվող աճով: 2019-ին ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ***ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ 30.8%:***

# ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ

## Ծավալների ավելացման հնարավորությունը

**ՓՄՁ-ների արտադրության ծավալները ավելացնելու հնարավորությունը** կապիտալի և աշխատողների մակարդակը պահպանելու դեպքում




*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

- Հայաստանում ՓՄՁ-ների ***ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻՆ (53%-Ը) ԳՈՐԾՈՒՄ Է ԻՐ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ*** և չի կարող ավելացնել արտադրության ծավալներն առանց հավելյալ ներդրումների:



# ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ

## ԹՈՂԱՐԿՄԱՆ ԱՃԻ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ



### Սպասումներն ըստ արտադրության ծավալներն ավելացնելու հնարավորության

[-2;2] սանդղակով




- ՓՄՁ-ների ***ՍՊԱՍՈՒՄՆԵՐՆ*** առաջիկա տարիներին իրենց թողարկման աճի վերաբերյալ ***ՉԱՓԱՎՈՐ ԴՐԱԿԱՆ ԵՆ:***
- ՓՄՁ-ների սպասումները ***ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ԿԱՊՎԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԹԵՐՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԵՏ:***

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

# ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԵՆ ՆԱԵՎ....

## ❖ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՓՄՁ-ՆԵՐԸ

Ներմուծում իրականացնող ՓՄՁ-ները ***(25.5%)*** արտահանում իրականացնողների (6.1%) համեմատ ***ԱՎԵԼԻ ՔԱՆ 4 ԱՆԳԱՄ ՇԱՏ ԵՆ:***

Վերջին 5 տարիներին երկրում ***ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՃԸ*** տեղի է ունեցել միայն ***ՄԻԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՂԻ ՀԱՇՎՈՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱՃԻ ՀԱՇՎԻՆ***, այլ ոչ թե մասնակիցների քանակի աճի հաշվին, քանի որ արտահանողների թիվը գրեթե չի փոխվել:




## ❖ Շահույթի օգտագործումը

Գերփոքրերը հիմնականում շահույթը բաշխում են ***ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ*** միջև, իսկ միջիններն օգտագործում են այն ***ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ:***

## ❖ Շրջանառվող արժույթները

Որքան մեծ է ՓՄՁ հասույթը, այնքան ավելի փոքր է ՀՀ դրամի տեսակարար կշիռը (մինչև 10մլն դեպքում՝ 97% է):

# ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- 2018թ. ***իրականացված ներդրումները***
  - ըստ չափի,
  - ըստ տեսակի
  - ***համադրումներ 2012թ*** հետ
- 2018թ. ***ներդրումները նորարարություններում***
  - ըստ տեսակի
  - ***համադրումներ 2012թ***. հետ
- ***Նոր նախագծեր*** և ***ընդլայնողական ծրագրեր***
- Նոր նախագծերի ***ֆինանսավորման աղբյուրները***



# ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ներդրումներ կատարած ՓՄՁ-ները




### Ներդրումներ կատարած ՓՄՁ-ների կշիռը 2018-ին և 2012-ին




- ՓՄՁ-ների ***39%-ը*** 2018 թվականին ***ԿԱՏԱՐԵԼ Է ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ:***
- ***2012-Ի ՀԱՄԵՄԱՏ՝*** ներդրում կատարած ՓՄՁ-ների ***ԿՇԻՌԸ ՆՎԱԶԵԼ Է՝*** ի հաշիվ գերփոքրերի:
- Բացի ներդրումներ կատարողների կշռից՝ նվազել է նաև ***ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿԸ*** (բնույթը). ***2013-ԻՆ՝ ՄԵՔԵՆԱ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ, ԱՅԺՄ՝ ՊԱՇԱՐՆԵՐ:***

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

## Նորարարական ներդրումներ կատարած ՓՄՁ-ները







- Այս ներդրումների նվազումը, թերևս, կարող է բացատրվել ***ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆՎԱԶՈՒՄՈՎ:***
- Հայտնի է, որ ՕՈՒՆ-ը, բացի ֆինանսավորումից, նաև տեխնոլոգիաների տրանսֆերտ ապահովող գործիք է և նորարարություններ է բերում տնտեսություն:



*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ներդրումներն ըստ տեսակների







❖ Հայաստանում ՓՄՁ-ները ***ԱՎԵԼԻ ՀԱՃԱԽ*** կատարում են ***ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ:***

❖ 2012թ. համեմատ՝ ՓՄՁ-ները կատարում են ավելի շատ կարճաժամկետ ներդրումները պաշարների (***WORKING CAPITAL***) ավելացման և ***ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ*** ուղղությամբ, փոխարենն ավելի քիչ երկարաժամկետ ներդրումներ են կատարում ***ՇԵՆՔ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*** և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման ուղղությամբ:

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Նորարարական ներդրումներ կատարած ՓՄՁ-ները




### 2018 թվականին ներդրումներ կատարած ՓՄՁ-ների կշիռն ըստ քաղաքների (%, տվյալ խմբի մեջ)




### Նորարարական ներդրումներն ըստ ներդրման տեսակի




❖ Մարզերում հատկապես ցածր են ***արտադրական և մարքեթինգային*** նորարարությունները:



*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

# Նորարարական ներդրումներն ըստ տեսակների

## Նորարարական ներդրումներ կատարած ՓՄՁ-ների կշիռը, 2012-ին և 2018-ին, տոկոսային կետ




❖ ***ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵՎՈՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ:***

❖ ***ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ*** ՓՄՁ-ների գերակշիռ մասն ***ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ***՝ արտաքին շուկաներում բարձր մրցակցությանը դիմակայելու անհրաժեշտությամբ:



*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Նոր նախագծեր և ընդլայնողական ծրագրերը /1-3 տարի/




### Ըստ ոլորտների




### Ըստ չափերի 2013թ և 2019թ




- ***ՓՄՁ-ների 35%-ն*** առաջիկա 3 տարիներին նախատեսում է նոր նախագծեր և ընդլայնողական ծրագրեր իրականացնել:
- 2013թ-ի համեմատ՝ ***ՆՎԱԶԵԼ Է*** գերփոքր ու փոքր ՓՄՁ-ների ***ԸՆԴԼԱՅՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ԿՇԻՌԸ:***



*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԵՆ ՆԱԵՎ….

❖ Ներդրումների ծավալները

❖ Նորարարական ներդրումների ազդեցությունը

❖ Նոր նախագծերը և ընդլայնողական ծրագրերը,

Դրանց ծավալային գնահատականները

❖ Այլ…







2018թ. Նորարարական ներդրումներն ու մոտակա տարիների աճի սպասումները



# ՓՄՁ-ՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- Բանկերի հետ ***ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ՓՄՁ-ՆԵՐԻ*** կշիռը
- Բանկերի հետ ***ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ***
- Բանկ ***ԸՆՏՐԵԼՈՒ*** կարևոր ***ԳՈՐԾՈՆՆԵՐԸ***
  - Մասնաճյուղ, թե հեռահար բանկինգ
  - Վարկի գծով համագործակցելու ամենակարևոր գործոնները
  - Ո՞ր բանկին առաջինը կդիմեք, եթե վարկ վերցնելու լինեք:
- Բանկային ***ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ***
  - *ժամկետը, տոկոսադրույքը, մեծությունը, արժույթը*
- Բանկային ***ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ*** օգտվելու ***ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ*** մոտակա 2 տարիներին
- Հայաստանում ***«ՓՄՁ ՎԱՐԿԵՐ»*** անվանումով տվյալների վերլուծությունն ըստ բանկերի



# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ

## Բանկերի հետ համագործակցության գնահատականը

- Բոլոր ՓՄՁ-ների ***86%-ը*** նշել է, որ ***ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐՈՒՄ*** համագործակցել է բանկերի հետ (օգտվել է որևէ ծառայությունից):
- ***2013-ի համեմատ՝*** բանկերի հետ համագործակցող ՓՄՁ-երի կշիռներում հիմնականում ***ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ԵՂԵԼ:***










- Որքան ***ՄԵԾ*** է ՓՄՁ չափը, այնքան մեծ է ***ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:***

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

# Բանկերի հետ համագործակցության գնահատականը

## Բանկերի հետ համագործակցության գնահատականներ (2013թ և 2019թ. համեմատություն)




- Բանկերի հետ համագործակցությունը ՓՄՁ-ները հիմնականում ***ԴՐԱԿԱՆ ԵՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ:***
- ***2013թ. ՀԱՄԵՄԱՏ՝*** 2019թ-ին բանկերի հետ համագործակցությունից ***շատ ԱՎԵԼԻ ԳՈՀ ԵՆ:***

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ




## Բանկ ընտրելու կարևոր գործոնները






- ❖ ***ԻՆՉՊԵՍ և 2013Թ-ԻՆ,*** ՓՄՁ-ների համար սպասարկման ***ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ ՄՆՈՒՄ Է ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆԸ:***
- ❖ ***ԳՅՈՒՄՐԻԻ*** ՓՄՁ-ները, կարծես ***ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋԿՈՏՆ ԵՆ,*** հատկապես սակագների և կանխիկի բանկոմատների առկայության առումով:

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ

## Օգտագործվող ծառայությունները

Վարկ/ վարկային գիծ/ օվերդրաֆտի օգտագործումը







## Բանկային ծառայությունների կարիքը




❖ ***ՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ*** (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ) ***ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ*** բանկային պրոդուկտներն են ՓՄՁ-ների շրջանում, որոնց համար ամենակարևոր գործոնը ***ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ*** է:

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ

## ՓՄՁ Պորտֆելի ծավալը

Բանկերի ՓՄՁ վարկերը, 2011-2019




Բանկերի ՓՄՁ վարկերը, 2011-2019




- ՓՄՁ վարկային պորտֆելը կազմում է մոտ 900 մլրդ դրամ կամ ***1.87 ՄԼՐԴ ԴՈԼԱՐ***։
- Ինչպես նշվել է, ***ՓՄՁ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԷ*** բանկային համակարգում։
- ՓՄՁ վարկավորման ***ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՊՈՐՏՖԵԼ*** ունի ***ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԸ (165 ՄԼՐԴ ԴՐԱՄ)***։ Վերջինիս պորտֆելը կտրուկ աճել է վերջին տարիներին։

*Բանկերի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ*

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ

## Գրավի առկայության ազդեցությունը







- Վարկերի մեծամասնությունը ***(56-58%) ԳՐԱՎՈՎ Է:***
- Գրավով վարկերի ծավալը ***2.5-3 ԱՆԳԱՄ ԱՎԵԼԻ ՄԵԾ Է:***
- Գրավով վարկերի ժամկետն ավելի ***ԵՐԿԱՐ*** է՝ միջինում ***1.1-1.2 ՏԱՐԻ:***
- Գրավով վարկերի ***ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐ Է:***

*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019, Ամերիա ՓԲԸ*

# Մասնաճյուղային ցանց vs հեռահար բանկինգ












- Միջինում ***10 ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ*** 6-ը նախընտրում է զարգացած մասնաճյուղերի ցանցը, իսկ ***4-Ը՝ ՀԵՌԱՀԱՐ ԲԱՆԿԻՆԳԸ:***
- Որքան ***ՄԵԾ Է*** ՓՄՁ-ն, այնքան ավելի է ***ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ ՀԵՌԱՀԱՐ ԲԱՆԿԻՆԳԻ*** առկայությունը:





*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԵՆ ՆԱԵՎ....

- **ՎԱՐԿ** վերցնելու համար **ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**
- Վարկ վերցնելու դեպքում **ԱՌԱՋԻՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԲԱՆԿԵՐԸ**
- Բանկային **ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**
    - *Ժամկետը, տոկոսադրույքը, մեծությունը, արժույթը*
- Բանկային պրոդուկտներից **ՕԳՏՎԵԼՈՒ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ** մոտակա 2 տարիներին
    - *Նախընտրելի ժամկետ*
- Շուկայում առաջարկվող **«ՓՄՁ ՎԱՐԿԵՐ»** անվանումով վարկերի վերլուծությունը






*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ*** ՓՄՁ-երը
  - Համեմատություն ***2013-ի*** հետ
- ***ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ*** ծառայություններ
- ***ԿԱՌԱՎԱՐՄԱՆ*** խորհրդատվության և հետազոտական ծառայություններ
- ***ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ***, մարքեթինգ և այլ ծառայություններ
- Հիմնական բանկից նման ծառայություններ ստանալու նախընտրությունները



# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններից օգտվողները



### Նախորդ 2 տարիներին մասնագիտական որևէ ծառայությունից օգտված ՓՄՁ-ները




- ՓՄՁ-ների **46%-ը** նախորդ 2 տարիների ընթացքում առնվազն մեկ անգամ օգտվել է ***«ՊԱՏՎԻՐԱԿՎՈՂ» (OUTSOURCE)*** որևէ ***ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ՝***
- միջինում դրա համար վճարելով ***120 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ;***
- ՓՄՁ-ների մոտ ***13%-ն ՍՏԱՑԵԼ Է ԱՆՎՃԱՐ*** մասնագիտական ծառայություններ, որոնք հավանաբար մատուցվել են ***ԸՆԿԵՐՆԵՐԻ/ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ/ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ:***



*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ

## Օգտվողները 2013թ և 2019թ



### Մասնագիտական ծառայությունից օգտվող ՓՄՁ-ները 2013թ. և 2019թ.




❖ 2013թ-ի համեմատ կտրուկ աճել են հատկապես ՓՄՁ-ների կողմից ***ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*** օգտագործման ծավալները, ինչը կարող է բացատրվել նաև նմանատիպ ծառայությունների ***ԳՆԻ ՆՎԱԶՈՒՄՈՎ*** (***100 ՀԱԶԱՐ՝ 2013-ԻՆ 120 ՀԱԶԱՐԻ*** փոխարեն)։



*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Մասնագիտական ծառայությունների պահանջարկը Երևանում և մարզերում






*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

- ❖ Ըստ ՓՄՁ-ների գնահատման՝ **ՊԱՀԱՆՋԱՐԿՆ ԱՃԵԼՈՒ Է** առաջիկա 2 տարիների ընթացքում:
- ❖ Գրեթե բոլոր տեսակի մասնագիտական ծառայությունների պահանջարկն ավելի մեծ է **ԵՐԵՎԱՆՈՒՄ, ՔԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ:**
- ❖ Հաշվապահական ծառայություններից բացի՝ **ՄԱՐԶԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ ՈՒՆԵՆ ԲԻԶՆԵՍ-ՊԼԱՆԻ** մշակման ծառայությունները:

# Կառավարման և հետազոտական ծառայությունների պահանջարկը






## Ծառայությունների համար վճարած արժեքը (հազար դրամ)

այլ ծառայությունների համեմատ




- ❖ Կառավարման խորհրդատվական ծառայություններն **ԱՎԵԼԻ ԹԱՆԿ ԵՆ** մյուս տիպի ծառայությունների համեմատ:
- ❖ Առավել մեծ պահանջարկ կա **ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ** նկատմամբ, որը նշված ծառայություններից նաև **ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻՆ Է:**



*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԵՆ ՆԱԵՎ....

- ❖ **Իրավաբանական** ծառայությունների պահանջարկը
- ❖ **Հաշվապահական/ աուդիտորական** ծառայությունների պահանջարկը
- ❖ **Մարքեթինգային** և այլ ծառայությունների պահանջարկը
- ❖ **Հիմնական բանկից** նման ծառայություններ ստանալու նախընտրությունը






*Աղբյուրը՝ ՓՄՁ հետազոտություն 2019 և ՓՄՁ հետազոտություն 2013, Ամերիա ՓԲԸ*

# ԱՄՓՈՓՈՒՄ

- 2018-ի սկզբին ՓՄՁ-ների քանակը գնահատվում էր մոտ ***67,000***:
- ՓՄՁ-ների ***ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ Է*** վերջիններիս քանակի համեմատ:
- ՓՄՁ-ների ***ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐ Է:***
- Նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է ***ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ և ՍԵՓԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՉԱՓԱՎՈՐ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ:***
- Առաջիկա տարիների համար թողարկման ծավալների ավելացման ***ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ ՉԱՓԱՎՈՐ ԴՐԱԿԱՆ ԵՆ:***
- ***ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ*** կատարող ՓՄՁ-ներն ***ԱՎԱՆԴԱԿԱՆ*** ներդրում կատարողների ***ՀԱՄԵՄԱՏ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԵՆ***:
- 2013-ի համեմատ՝ 2019-ին ***ԲԱՆԿԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԳՈՀ ԵՆ:***



# GEM- Global entrepreneurship monitor

Ձեռնարկատիրության Համաշխարհային Մոնիտորը (GEM) պարբերաբար չափում է **ձեռնարկատիրության մակարդակը**:

GEM- ը թվերով.

- **20 տարվա** տվյալներ
- Տարեկան **120,000+ հարցազրույց**
- **100+ երկրներ**
- **500+ փորձագետ**՝ ձեռնարկատիրության ուսումնասիրության ոլորտում

## Բնակչության հարցում (APS)

- Յուրահատուկ գործիք՝ **ձեռնարկատիրության մակարդակը չափելու** համար;
- Կենտրոնանում է անհատների վրա՝ գնահատելով ձեռնարկատիրության նկատմամբ **վերաբերմունքը** և **ընկալումները**;
- Թույլ է տալիս նաև գնահատել **«ոչ ֆորմալ»** ներդրումները:

## Ազգային փորձագիտական հարցում (NES)

- Ուղղված է գնահատելու երկրում **ձեռնարկատիրական միջավայրը**;
- Հիմնված է **փորձագետների կարծիքի** վրա

## Համաշխարհային զեկույց

**54 երկիր**

**129,345 հարցում**
Բնակչության հարցում (APS)

**2,315 փորձագետ**
Ազգային փորձագիտական հարցում (NES)




**Մարտ 2020**

## Առաջին անգամ Հայաստանում

**Ամերիա**

**2000 հարցված**
Բնակչության հարցում (APS)

**40 փորձագետ**
Ազգային փորձագիտական հարցում (NES)

Տվյալների հավաքագրում
**Ապրիլ- հուլիս 2019**

Ազգային զեկույց
**Ապրիլ 2020**

# GEM- Հայաստանի ազգային զեկույց

## Հայաստանի վարկանիշը ըստ որոշ ցուցանիշների 50* երկրների շարքում




Հետազոտության ընթացքում քննարկվում է նաև.

- Ձեռնարկատիրությամբ զբաղվելու **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ** և **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ** հիմքերը
- **ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐ**. Ինչո՞ւ են մարդիկ ձեռնարկատիրությամբ զբաղվում
- **«ՈՉ ՖՈՐՄԱԼ»** ներդրումներ
- **ԲԻԶՆԵՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ** (դրական և բացասական պատճառներ)

**ՀԵՏԱՔՐՔԻՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ** GEM ազգային զեկույցում.

Հայաստանը **3-րդն է**, մարդկանց կշռով ովքեր ասում են, որ **մյուսների կարծիքով, իրենք շատ նորարար են:**

Բնակչության **7,9%** -ը վերջերս **միջոցներ է տրամադրել** մեկ ուրիշին՝ **նոր բիզնես** սկսելու համար (50-ից **14**-րդը):

Հայաստանում բիզնեսից դրական պատճառով դուրս եկածների կշիռը շատ ցածր է (**15%**): Այս ցուցանիշով Հայաստանը հետ է մյուս երկրներից (50-ից **41**-րդը):

Հայաստանում «Աշխարհը փոխելը» բիզնես սկսելու շարժառիթ է միայն **18.4%**-ի համար (բիզնես հիմնողների մեջ): Այս ցուցանիշով Հայաստանը առաջ է ընդամենը 3 երկրից (**Իտալիա, Կորեայի Հանրապետություն, Մադագասկար**):



*Փորձագիտական հարցմանը մասնակցել են 54 երկիր

## Ազգային զեկույցի բովանդակությունը

1. Ներածություն
2. Ձեռնարկատիրության սոցիալական և մշակութային հիմքերը
3. Ձեռնարկատիրական գործունեությունը Հայաստանում
4. Դրդապատճառներ. Ինչու՞ են մարդիկ սկսում կամ գործ անում բիզնեսով:
5. «Ոչ ֆորմալ» ներդրումներ
6. Բիզնեսից դուրս գալը
7. Ձեռնարկատիրության համատեքստը

**GEM 2019/2020 համաշխարհային զեկույցն այստեղ.**

# Շնորհակալություն

# ՀԱՐՑԵ՞Ր

